

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

**ԿՈՂԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
2013 – 2016 ԹԹ.
ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

ԿԱԶՄԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

12.02.2013թ. թիվ 06 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ

2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի իրավիճակի գնահատում
- Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
- Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի , նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևավորում:
- Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
- Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված 1 – Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը:

Հավելված 2 – Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

ԻՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառայա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է , որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից , քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն , որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Ներկայացվող քառամյա զարգացման ծրագիրը առաջիկա չորս տարիների համար հանդիսանալու է Կողես համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԿՈՂԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Կողես գյուղը հիմնվել է մոտ 1000 տարի առաջ , նախկինում այն Հունական գյուղ էր : Գյուղում և շրջակայքում պահպանվել են քառակող կոթող (XIդ.), եկեղեցի (XIդ.), գերեզմաններ խաչքարերով (XII-XIIIդդ.), կամուրջ (XIIIդ.), Տուտիկ իշխանի կառուցած հուշակոթողը (1241թ.):

Կողես համայնքը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքում՝ **հյուսիսային մասում**: Մարզկենտրոնից հեռավորությունը 52 կմ է : Շրջկենտրոնը՝ քաղաք Ստեփանավանը , որից գյուղի հեռավորությունը մոտ 18 կմ է : Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է **1350** մ է, մոտական երկաթուղուց հեռավորությունը **20** կմ է : Գյուղի վարչական տարածքը 1219,0 հա է , որից բնակելի զանգվածը կազմում է **23** հա: Համայնքի կլիման մեղմ է, բարեխառը: Ձմռանը համեմատաբար տաք է՝ հիմնականում կայուն ձյունածածկով: Հունվարի միջին ջերմաստիճանը - 4.5 է, հուլիսին՝ +20 : Նվազագույն ջերմաստիճանը - 32 է , առավելագույնը՝ +40: Շնորհիվ մեղմ կլիմայի ունի փարթամ բուսականություն: Անտառներում հիմնականում կա կաղնի , լորենի , սոճի , վայրի տանձի , բոխի:

Համայնքի բնակչությունը կազմում է 380 մարդ , որից տղամարդ 196 , կին 184 : Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

- ❖ երեխաներ մինչև 4 տարեկան – **12**
- ❖ դպրոցականներ – **37**
- ❖ բնակչություն 18 – 65 տարեկան - 122
- ❖ թոշակառուներ – **34**
- ❖ հաշմանդամներ - 0

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 128 մարդ:

Գյուղը բաղկացած է 102 ընտանիքից , որոնցից 11 ընդգրկված են և օգտվում են << Փարոս >> ծրագրից:

ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքը կառավարվում է գյուղապետի կողմից , որն ընտրվում է չորս տարին մեկ : Գյուղապետարանի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը՝

- ❖ Գյուղապետի տեղակալ
- ❖ Աշխատակազմի քարտուղար
- ❖ Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ
- ❖ Աշխատակազմի 1 –ին կարգի մասնագետ
- ❖ Հավաքարար

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔ

- ❖ Վարչական շենք - 1
- ❖ Ակումբի շենք - 1
- ❖ Զրի և կոյուղու ցանց - 1
- ❖ Գիշերային լուսավորության համակարգ - 1
- ❖ Տրակտորներ - 6
- ❖ Ծառայողական մեքենա - 1

Գյուղը ամբողջությամբ գազաֆիկացված է :

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակարանային ֆոնդը բաղկացած է 85 առանձնատներից , որորոնցից 15 կառուցված են փայտից , մնացածը քարից: Բոլոր տները բնակեցված են , բարվոք վիճակում :

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը – 1219 հա որից՝

- ❖ Վարելահող – 305 հա
- ❖ Խոտարք – 64 հա
- ❖ Արոտ – 375 հա
- ❖ Արդյունաբերական հողեր – 6 հա
- ❖ Անտառային հողեր – 75 հա
- ❖ Բնակելի կառուցապատման հողեր – 23 հա
- ❖ Էներգետիկայի և կապի նշանակության հողեր – 0,2 հա
- ❖ Գերեզմանոցներ – 2 հա
- ❖ Հատուկ պահպանվող հողեր – 3 հա
- ❖ Զրային հողեր – 0,5 հա
- ❖ Դաշտային ճանապարհներ – 13 կմ
- ❖ Ներհամայնքային ճանապարհ – 5 կմ
- ❖ Գյուղատնտեսական նշանակության հողեր սեփականաշնորհված – 300հա :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղի բնակիչները մասնավորապես զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակմամբ: Համայնքում 120 տնտեսություն է , որից 60 – ը զբաղվում են անասնապահությամբ,

ըստ որի առկա է խոշոր եղջերավոր անասուններ 213 գլուխ , ոչխար 125 գլուխ , խոզ 30 գլուխ, ձի 4 գլուխ , ճագար 60 գլուխ , թռչուն 945թև , մեղվաընտանիք 127 , ինչը կազմում է բնակիչների եկամուտի հիմնական աղբյուրը:

Գյուղը միացված է խմելու ջրի ջրամատակարարման, ինչպես նաև ոռոգման կենտրոնական համակարգերին: Ոռոգման համար օգտվում են Լոռու ջրանցքից , ներտնտեսային ոգոգման ցանց չկա , ոռոգումը կատարվում է մարգերով , 60% հողատարածքների ընդհանրապես չեն ոռոգվում , ինչը բերում է երաշտի դեպքում բերքի բավականին քանակության կրստի: Ցանվում է համայնքի հողերից 300 հա, բազմամյա խոտերի ցանքը կազմում է 60 հա:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով: Տարվա մեջ երկու անգամ կատարվում է ընդհանուր աղբահեռացման աշխատանքներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ հիմնական դպրոց ինամյա ծրագրով : Դպրոցի շենքը բարվոք վիճակում է : Դպրոցի անձնակազմը բաղկացած է 16 աշխատողից ունի 28 աշակերտ:

ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ , ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյուղի մշակութային կյանքը բաղկացած է ավանդական տոներով , ինչպես նաև մեծ շուքով պարտադիր նշվում է Հայրենական պատերազմի հաղթանակի օրը : Դպրոցի շրջանավարդների պատվին ամպայման կազմակերպվում են տոնահանդեսներ գյուղի բոլոր բնակիչների մասնակցությամբ: Գյուղը ունի ակումբի շենք , որը վերանորոգումից հետո լիարժեք մշակութային կենտրոն է՝ այդտեղ անցկացվում են բոլոր միջոցառումները , կազմակերպում են համերգներ , մանկական թատրոնի այցելություններ: Կառուցված մարզադաշտը հավաքում է ֆուտբոլասերների խաղի:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ բուժկետ , բաղկացած երեք սենյակներից: Բուժկետը կահավորված բոլոր անհրաժեշտ պարագաներով : Բուժկետում աշխատում է մեկ բուժքույր , ինչպես նաև աշխատում է մեկ ընտանեկան բժշիկ , որը գալիս է Ագարակ գյուղից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- ❖ Չնայաց գյուղի ոչ հետաքրքիր և ծանր կենցաղային պայմաններով հագեցած առօրյաներն բնակիչների ցանկությունը ապրել իրենց պապական հողերում:
- ❖ Գյուղի բնակիչների աշխատացիրության շնորհիվ չկան անմշակ վարելահողեր և խիստ աղքատ ընտանիքներ:
- ❖ Գյուղում կատարվում է հարկերի հավաքագրումը 100% - ով , ինչը նպաստում է բյուջեի կատարմանը և հնարավորինս համայնքի խնդիրների լուծմանը:
- ❖ Բնակչության զգալի մասը զբաղվում է հողագործության և անասնապահության , որպես երկրորդական եկամուտ դիտվում է մեղվապահությունը, ինչին նպաստում են Լոռվա ալպիական դաշտերի առկայությունը : Լուծված է աշխատունակ բնակչության զբաղվածության հարցը :
- ❖ Հողերի 80% հարավային կողմնադրության են և վարելահողերի 40 % ոռոջման տակ , ինչ նպաստում է բարքատվությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- ❖ Ծնելիության նվազում ` կապված բնակչության պակասի և տնտեսական վիճակից:
- ❖ Ճանապարհների անմխիթար վիճակը
- ❖ Գյուղի ներքին ցանցի ոռոջման խնդիրը
- ❖ Համայնքի բնակչության կենցաղի բարելավումը
- ❖ Հակակարկտային կայանների բացակայություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ❖ Աշխատուժի առկայություն
- ❖ Անասնապահության զարգացման հնարավորություն

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կատարել բարեփոխումներ , որոնք կհանգեցնել գյուղի բարեկարգման և զարգացմանը: Բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական , մշակութային կյանքը;Ստեղծել բնակչության հանգստի պայմաններ:

Բարեփոխումներ՝

- ❖ Մաշված , ոչ սարքին գյուղ տեխնիկայի օտարում , նորի ձեռք բերման նպատակով
- ❖ Բերքի պահպանման համար անհրաժեշտ է հակակարկտային կայաններ
- ❖ Ներհամայնքային ճանապարհների բարելավում
- ❖ Հողագործության և անասնապահության զարգացումը
- ❖ Համայնքի անտառային տարածքների պահպանում և ավելացում
- ❖ Գյուղի գիշերային ցանցի ավելացումը
- ❖ Վարչական շենքի և ակումբի համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում
- ❖ Սեյսմիկ դիսկի նվազեցման համար միջոցառումներ :

ԾՐԱԳԻՐ 1.

Մաշված , ոչ սարքին գյուղ տեխնիկայի օտարում , նորի ձեռք բերման նպատակով

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախկին տնտեսության լուծարման գործընթացից գյուղապետարանին որպես սեփականություն հասել է գյուղ . տեխնիկա ` խոտհնձիչ կոմբայն 1 հատ , հատիկ հավաքող կոմբայն 1 հատ , տրակտորներ : Տվյալ տեխնիկական շահագործելու , վերանորոգելու , սարքին պահելու համար մեծ ծախսեր է անհրաժեշտ , ինչպես նաև ընդունելով մշակվող տարածքների չափերը, մասնավոր լինելու հանգամանքը , ճիշտ է ձեռք բերել գաբարիտներով փոքր , քիչ վառելիք օգտագործող գյուղ. տեխնիկա , որը շահագործման համար մատչելի է և տնտեսող , ինչը չի կարելի նշել ներկա , լավագույն դեպքում գործող , տեխնիկայի մասին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքում գյուղատնտեսության զարգացում , գյուղական մթերքի որակի և քանակի ավելացման նպատակներով օտարել ոչ սարքին և առավել մաշված գյուղ. տեխնիկան

Նորը գնելու համար: Օտարումից ակնկալվում է 5000.0 հազ. դրամ , որը բավարարում է 1 միավոր հացահատիկ հավաքող կոմբայն գնելու համար:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից ոչ սարքին և առավել մաշված գյուղ. տեխնիկայի օտարումից առաջացած ֆինանսական միջոցներ համայնքում անհրաժեշտ նոր գյուղ. տեխնիկայի ձեռք բերման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 2.

Բերքի պահպանման համար անհրաժեշտ է հակակարկտային կայաններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բերքի պահպանման հարցը խոցելի է : Հաճախ կարկուտների պատճառով բերքի կորստի չափերը զգալի են , ինչը խփում է գյուղացու ֆինանսական վիճակին և կյանքի զարգացմանը: Հակակարկտային կայանների առկայության դեպքում բերքի 70% երաշխավորված է:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1 միավոր հակակարկտային կայանի գործողության շառավիղը 80 հա է , իսկ գինը 5000,0 հազ. դրամ : Կողես համայնքի մշակվող տարածքը 300 հա , ամբողջը պահպանելու համար անհրաժեշտ է 6 միավոր հակակարկտային կայաններ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից ոչ սարքին և առավել մաշված գյուղ. տեխնիկայի օտարումից առաջացած համապատասխան ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար:

ԾՐԱԳԻՐ 3.

Գյուղի գիշերային ցանցի ավելացումը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի փողոցների լուսավորությունը ևս բնակիչների կյանքի , կենցաղի բարեփոխումներից են , այդ իսկ պատճառով ինչքան գյուղի փողոցները լինեն գիշերվա ժամերին լուսավոր , այդքան ավելի լավ կլինի բնակիչների համար:Ներկայումս լուսավորվում է գյուղի 60% , ինչը կազմում է 45 հատ լուսատու :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիշերային լուսատուների քանակությունը ավելացնելով մինչև 60 հատ գյուղի լուսավորության խնդիրը լուծվում է 100 % -ով , ինչը բնակիչների կյանքի և կենցաղային պայմանների բարելավում է :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից համապատասխան ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար:
Վերը նշված ծրագրերի իրագործումը կհանգեցնի համայնքի ընդհանուր զարգացմանը, բնակչության կյանքի մակարդակի բարձրացմանը , կենցաղային պայմանների բարելավմանը:

ԾՐԱԳԻՐ 4.

Սեյսմիկ ռիսկի նվազեցման համար միջոցառումներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.10.2012թ. թիվ 1351 – Ն որոշման 1 –ին և 2 –րդ կետերի պահանջների կատարումը համայնքի 2013 – 2016 թթ. զարգացման ծրագրում ներկայացվում է համայնքի սեյսմիկ ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ միջոցառումների կատարումը ` ելակետային տվյալների տրամադրում , նախկինում կատարված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն , հնարավոր վտանգների բնութագիր , շենքերի և շինությունների խոցելիության գնահատում , քարտեզների պատրաստում ` ելակետային , սեյսմաշրջանացման , սեյսմիկ ռիսկի գնահատման: Ծրագրի կատարման համար անհրաժեշտ է 6000,0 հազ. դրամ :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքի սեյսմիկ վիճակի ճիշտ գնահատումը , ռիսկի նվազեցման վերաբերյալ միջոցառումների կատարման շնորհիվ աղետների դեպքում վնասի մինիմալացում :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից համապատասխան ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ներկայացված ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ է համայնքի ֆինանսական միջոցների ճիշտ գնահատումը և կանխատեսումը:
Լոռու մարզի Կողես համայնքի եմանուտները և կանխատեսումը

h/h	Եկամտի անվանումը	2012թ. փաստ.	2013թ. փաստ.	2014թ. կանխ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
1.	Հողի հարկ	3146,0	3160.0	3160.0	3160.0	3160.0
2.	Գույքահարկ	436,0	440.0	440.0	440.0	440.0
3.	Պահուստային հողերի վարձ.	1437,0	1500.0	1500.0	1500.0	1500.0
4.	տուրքեր	10.0	10.0	10.0	10.0	10.0
Ընդամենը սեփական եկամուտներ		5029,0	5110.0	5110.0	5110.0	5110.0
5.	Պաշ. Տրանսֆերտներ , դոտացիա	1492,8	2292.0	2292.0	2292.0	2292.0
Ընդամենը եկամուտներ		6521,8	7402,0	7402,0	7402,0	7402,0

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

h/h	ցուցանիշներ	չափի միավոր	2012թ. փաստ.	2013թ. փաստ.	2014թ. կանխ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
1	համայնքի տարածքը	հա	1219	1219	1219	1219	1219
2	բնակչության թիվը	մարդ	355	380	388	394	405
3	ծնունդ	մարդ	4	5	6	8	10
4	մահացություն	մարդ	3	3	4	4	4
5	աշխ. ռեսուրսներ	մարդ	126	128	136	137	144
6	Գործազրկության մակարդակը	տոկոս	5	5	5	5	5
7	առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	1	1	1	1	1
8	պահուստային հողեր	հա	60	60	60	60	60
9	խմելու ջրի ներցանցային երկ.	կմ	3	3	3	3	3
10	ներհամայնքային ռոռքման ցանցի երկ.	կմ	-	-	-	-	-
11	ռոռքման համակարգի տակ ընկած հողեր	հա	120	120	120	120	120
12	ներհամ. ճանապ. երկր.	կմ	5	5	5	5	5

13	ոչ բարեկարգ ճանապարհեր.	կմ	5	5	5	5	5
14	բնակ. ֆոնդ	հազ.քմ	11,268	11,268	11,268	11,268	11,268
15	մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	100	100	100	100	100
16	ջրի կորուստ ցանցում	տոկոս	5	5	5	5	5
17	աշակերտների թիվը	մարդ	20	24	26	28	30
18	երեխաների թիվը	մարդ	42	53	59	61	63
19	գյուղապետարանի աշխատակազմի թիվը	մարդ	6	6	6	6	6

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


h/h	Արտադրության անվանումը	Քանակը տն
1	ցորեն	500
2	կարտոֆիլ	1500
3	բանջարաբոստանային կուլտուրաներ	3
4	կաթ	160
5	միս	10
6	մեղր	1
7	բուրդ	0.1

h/h	Ցանքատարածություններ	Քանակը հա
1	հացահատիկ	170
2	կարտոֆիլ	75
3	առվույտ	60

h/h	Անասնազխաքանակ	Քանակը հատ
1	խոշոր եղջերավոր անասուն	213
2	մանր եղջերավոր անասուն	125
3	խոզ	30
4	թռչուն	945
5	մեղվաբնակարաններ	127
6	ծի	4

h/h	Գյուղատնտեսական մեքենաներ	Քանակը հատ
1	թրթուրավոր տրակտոր	20
2	անվավոր տրակտոր	18
3	խոտհնձիչ	7
4	կցասայլ	4
5	գութան	6
6	կուլտիվատոր	3
7	շարքացան	4

**ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**



ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

h/h	անվանումը	քանակը
1	Վարչական շենք	1
2	Ակումբի շենք	1
3	Վազոն տնակներ	24
4	Գիշերային լույսի համակարգ	1
5	Ծառայողական մեքենա	1
6	Տրակտոր T - 70	3
7	Համակարգիչ	1
8	Լազերային տպիչ	1
9	Բուլդոզեր	1
10	Տրակտոր DT - 75	2
11	Կոմբայն	1
12	Ջուր կոյուղու համակարգ	1
13	Գութան	3
14	Կարտոֆիլ հանող	3
15	Պրես պոգրուզիկ	2
16	Կցասայլ	3
17	Կասիլկա	3
18	Կուլտիվատոր	3
19	Փոցխ	3

